



## ԽՈՐՀՈԱՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՇՏՈՒԹԵՆԵՆ ՎԵՐՋ

«Սիրեցէք զմիմեանս ինչպէս և ես սիրեցի զծեզ»:

ՃԻՍՈՒՄ

Պատմական դեպք մը արդարեւ հաշտությունը, որ անցյալ տարվան հոկտեմբեր ամսու 26-ին կնքվեցավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և Մեծի Տանն Կիլիկիո շնորհաղարդ Կաթողիկոսին միջև, հաստատելով խաղաղությունն ու միությունը Հայաստանյաց Ս. Եկեղեցվո մեջ, որ կապակսեին անոր վերջին ավելի քան յոթը տարիներու շրջանին:

Սրտապնդի իրողություն մը նաև, բոլոր անոնց համար, որոնք իրապես և խորապես տառապեցան Եկեղեցվո մեջ ստեղծված բաժանումին պատճառավ, որովհետեւ զայն արդարության նկատեցին, իրավ մտավախությամբ, մեր ազգային կյանքին համար վտանգավոր կացություն մը: Յոթ տարիներու տարակարծությանց, վեճի, երկպառակության հետևանքներու ամեննեն ավելի կրեց հայ զանգվածը Բեյրութի մեջ, որ ամեննեն մոտն էր Կիլիկյան պատմական ու դարւվոր Աթոռի պանդիստական նոր կայրին, Անթիլիասին:

Զենք կրնար պնդել, որ եղբարյասպան և եղբարյագավ տրամադրություններ ծնունդ առին այն օրեն, երբ վեճը սկսավ Եկեղեցիին մեջ: Նվազագույն միամտություն պիտի ըլլար այդպես մտածել: Ավելի ճիշտ պիտի ըլլար րսել, որ հայ ոգիին, մտածումներուն և նպատակներուն և զանոնք հասկնալու և իրականացնելու կերպին տարբերությանց բախումին արդյունքն էր նույնիսկ տխուր կացությունը, որ ստեղծվագ Եկեղեցիին ներս: Այդ զայրուցին էր հակառակությանց, որ իր զագաթնակետին հասավ այն օր, երբ ցցվեցավ եղբար եղբոր գեմ, ու հոսեցավ արյունը հումպետս:

Մեր հայեցողությամբ մեր ժողովուրդը իր բացառիկ, եղակի կացության հարմար ճամբար մը պետք է ընտրեալ աշխարհի ներկա քառ-

սային դրության մեջ: Ճիշտ է, որ դժվար է ընել այդ: Առանձնապես քաղաքականություն մը ունենալ, երբ այլապես մեր ժողովուրդի բեկորները կապրին այլապան և այլաձև երկիրներու մեջ, բնականորեն ննթակա յուրաքանչյուրին բաղաքական ուղղության և գաղափարաբնական դավանության: Այդ բոլորն դուրս, առանձնահատուվ հայկական քաղաքականություն մը վարելու հարցը կմնա դժվարին իրագործում մը, բայց չկ դադրիր ըլլալի հրամայական պահանջը մը, մեր ժողովուրդի ներկան և ապագան կարենալ հստակորեն ճշտելու և ամրացնելու համար:

Այս տեսակետեն հոկտեմբեր 26-ի դեպքը, երջանիկ ողջագուրումը Հայաստանյաց Առարեւական Ս. Եկեղեցիի նվիրապետական բարձրագույն Աթոռներուն Պետերում, կստանա բացառիկ և կարևոր նշանակություն, Կար փոտահության պահաս մը անշուշտ, որ կծագեր հոգեկան այն վիճակին, որ աշխարհի ներկա կացությունը կպարտադրե բոլոր ժողովուրդներու: Ու մանավանդ մեղի պես ժողովուրդի մը, որ հաստատուն կովան մը չունի իր գոյությունը ապահովելու և տեսական տառապանքին մեջն է խարված, անիրավված, մոռցված ըլլալու դառն հոգեկան ապրումներուն: Բայց ո՞չ մեկ ժամանակ դժվարությանց մեջն ելլելու կերպն է վիճիկ և հակառակի իրարու հետ, երբ տրամարանական պահանջըն է ուժերու միացում, հաղթահարելու համար խոշնողությունը փրկության ճամբուն վրա: Բաժանումը տկարությունն կստեղծեալ անտարակույս, շրջելով բանաձևված ճշմարտությունը—միությունը զորություն է, Ու բաժանումը, որ կսսմառնար խորանալ Եկեղեցիին մեջ, մեկ անդամեն շրացավ Հայրապետներու ողջագործմամբ: Ահավասիկ թինչո՞ւ շատ իրավաւնքով ուրախության խո-

րունկ ալիք մը անցավ բոլոր հայ սրտերն, երբ արձագանքեց Հայրապետներու հանդիպ-ման լուրը ծագե ծագ Հայ Սփյուռքին:

Այս կնշանակեր, որ ամեն ոք կապասեր այն բարեկեպ օրվան: Ոչ մեկ հոգի և ոչ մեկ կողմ հավատանք, որ գոհ էր իրաց վիճակն: Անոր ապացուց յոթ տարիներու ընթացքին թափված ճիգերն ու ջանքերը այդ մերձեցումը իրականացնելու համաս սրտցավ ազգայիններու և հասարակական ամեն կարգի գործիններու կողմեւ: Առաջին անգամ չէ, որ վեճ կծագեր մեր եկեղեցվու մեջ պատմության ընթացքին: Ունեինք դասերը նախորդ տխուր իրադարձությանց, որոնց անդրադարձը մեր եկեղեցական ազգային կյանքին վրա հիմա գոհնակությամբ չէ որ կհիշվի: Այդ կացությունները ստեղծողներն ալ ենթարկված են պատմության դատապարտության: Այդ այդպիս ըլլալով հանդերձ, ամրող ժողովուրդով գիտակցելով իսկ ներքին վեճերու հառաջացուցած վտանգներուն, կյունենք տակավին նույն սխալը ազգովին: Թերություն մը, որ շատ սուլ է արժած մեզի: Այդ թերությունը սրբագրելու աշխատանքը կվերաբերի ազգին կրոնական, հասարակական, քաղաքական կյանքը առաջնորդելու կոչված մարդերու: Չուզ Կաթողիկոսներու հայտնարերած սովին այս տեսակետով ալ յավագույն օրինակը պիտի ծառայե մեզի Միություն ստեղծելու, համագործակցություն հաստատելու, ազգային ամրողականությունը պաշտպանելու գլխավոր մտահոգութենքն և ըմբռնումն ծագեցավ, կիսորհինք, հաշտության բարերար և պարծակ խորհուրդը Ամենայն Հայոց մեծագործ և վեհովի Կաթողիկոսին նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի մտքին մեջ, որ նախարարյը առավ հանդիպելու Մեծի Տանն Կիլիկիո Եկեղափառ Հայրապետական նորին Ս. Օծություն Տ. Տ. Կորեն Ա-ի, երուսաղեմի մեջ, ուր գացած էր հովատ և հերկրպագություն սրբավայրերու և առաջնորդելու աշխատանքները Ս. Հարության մեծագույն քրիստոնեական Տաճարին նորոգության, նախարարյը առավ հանդիպելու Համագույն կեղափառ Հայրապետական հանձնախումբի ժողովներուն: Եթե աղջին և եկեղեցին սերը ըլլար գիտավոր դրապատճառ այդ արարեին, դժվար պիտի ըլլար ըմբռնել Ամենայն Հայոց Հայրապետին հանկարծարությունը կիլիկյան Աթոռի նորընտիր Հայրապետին: Զէին վերցած պատճառները, որ ստեղծեցին բաժանումը ու գոյություն ալ ունին անոնք հաշտութենք վերց տակավին: Չուզ Հայրապետներու ողջագործումը իրականացավ առանց նախադրյալ պայմաններու: Ճանչցվեցավ կաթողիկոսական հանգա-

մանքը Մեծի Տանն Կիլիկիո Գահակալին, գոնե առերկույթս այդքան զուրկին ձևով մը: Բնական էր, որ մտածեին շատեր, որ ինչո՞ւ, չպատահեր այս գեպքը տարիներ առաջ, որ Կիլիկիո Աթոռի տարաբախտ Հայրապետ մը ալ չմեռներ կոտրած սրտով, երբ այնքան պարզ էր խնդիրը: Այդքան ալ պարզ չէ, ըստ երկութիւն շատ սովորական արարքը ողջագործման: Պետք էր մոռցվեր շատ բան, և կամ ավելի գերազանց, գերակշիռ դատողությունը մը գար նվազեցնելու արժեկորումը հարցերու, որոնք հուզեցին կյանքը Հայաստանյայց եկեղեցին վերցին յոթ տարիներուն: Անկարելի էր այս մերձեցումը, եթե շտիրապետեր քրիստոնեական սերը, իբրև անկոփիսարինելի շաղախի ներդաշնակության, սրտին մեջ Ամենայն Հայոց մեծ Հայրապետին Ալլապէս որևէ հաշտություն բնականորեն, իբրև անմիջական պայման, կենթադրե զիջողություն եռկու կողմեն ալ հավասարապես: Սերը սակայն պայման չի ճանշնար: Եղայրներու մեջ պետք է վերնային բոլոր արգելքները, որովհետեւ հոգիներու մեջ գոյացած սարը կհալի միայն սիրո արևեն, ինչպես կըքանան անոր լույսին շուքն ու մութը ատելության, վեճի, եղբայրագավ զգացումներու և կործանարար տրամադրությանց: Եկեղեցիի և Ալգին հանգեպ տածված անհուն սիրո և նվիրումի զգացումով միայն կարելի է բացատրել երջանիկ այս իրողությունը, որ կոշված է իբրև լուսավոր էջ արծանագրվելու հայ ժողովուրդի պատմության մեջ: Անգամ մըն ալ պայցուցվեցավ, որ ինչ որ անկարելի է օրենքներուն և բանականության միջոցավ իրագործել, կարելի է սիրով հաղթահարել: Սերն է, որ անկարելին կարելի կընե: Ուրիմն այս հաշտությունը մեր ժողովուրդին համար դարերով հեղեղված միշտ այժմեական պատճամ մ'ալ ունի: «Սիրեցե՛ք զիրար»: ու համարական կաթողիկական պիտի պատճան բոլոր երազներդ, պիտի հաջողությամբ պասկվին աշխատանքները ու պիտի հասնիս նպատակներու լիակատար պսակումին:

Ու նոր տարվան հետ ունինք այս նոր հուսադրումը մեր աղքային-եկեղեցական կյանքի մեջ հառաջիկա հաջողություններու համար: Պիտի բավի միայն, որ մասնակի հետապնդումների և անցողական և կողմնակի շահերեն վեր դասվին ազգը ու անոր հոգեկան և բարոյական կենսունակություն և ուժ զարող անստոյուտ և փրկարգութող հաստատությունը՝ Հայաստանյայց Առաքելական Ա. Եկեղեցին:

(Խմբագրական «Հայ կեղրոն»-ի,  
1964 հունվար, № 1):